Վերծանելով լռության ձայնը

(աքսորական Խաչիկ Խաչիկյանի նամակները)

Գրել բռնադատվածի մասին, կնշանակի վերծանել լռության ձայնը: Ծնվել գաղթականների ընտանիքում և լռել ոչինչ չիմանալ Ցեղասպանության մասին, լինել բռնագաղթածի որդի ու թոռ ու չխոսել նրա և այդ մասին. լուսավոր քսաներորդ դարում այս մանկուրտիզմը հնարավոր էր միայն սովետի իրականության մեջ:



ՀՍՀՄ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

375010, Երևան, Շաումյան 6

25-04-91№ 13-2-237-91

ՊՐՈԿՈՒՐԱՏՈՒՐԱ
СССР
ПРОКУРАТУРА
АРМЯНСКОЙ ССР

375010, Ереван, Шаумян 6

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Խաչիկյան Խաչիկ Դանիելի-նված 1905թ. ՀՀ Թալինի շրջանի Այնալու գյուղում: Կալանքի է վերցվել 04.03.1932թ.:

ՀԽՍՀ ՆԳԺԿ եռյակի 1938թ. մարտի 10-ի որոշմամբ դատապարտվել է ազատազրկման 10-տարի ժամանակով, այն բանի համար, որ նա 1932թ. կապվել է հակահեղափոխական դաշնակցական անձանց հետ և ամեն միջոցներով օգնել է նրանց:

Հայաստանի Հանրապետության դատախազության 1991թ. ապրիլի 25-ի եզրակացությամբ Խ.Խաչիկյանը-ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989թ. հունվարի 16-ի ,,30-40-ական թվականներին և 50-ական թվական սկզբներին ռեպրեսիայի զոհերի նկատմամբ արդարությունը վերականգնելու լրացուցիչ միջոցառումների մասին,, հրամանագրի 1-ին հոդվածի հիման վրա ռեաբիլիտացիայի է ենթարկվել:

Ռեաբիլիտացիայի ենթարկվածների արտոնությունները սահմանված են ԽՍՀՄ մինիստրների խորհրդի 09.09.1955թ. նո. 1655 և ՀԽՍՀ մինիստրների խորհրդի 26.09.1955թ. նո. 9-345 որոշումներով:

Պետանվտանգության մարմինների գործերի քննության վրա հսկող բաժնի պետ՝ Մ.Գ.Զիլինգարյան

Կատ.Է.Տեր-Գոռգոսյան

Խաչիկյան Խաչիկ Դանիելի, ծնված 1905 թ Թալինի շրջանի Այնալու գյուղում: Կալանքի է վերցվել 04. 03. 1932 թվականին: ՀԽՍՀ ՆԳԺԿ եռյակի՝ 1938 թվականի մարտի 10-ի որոշմամբ ազատազրկվել է 10 տարով այն բանի համար, որ նա 1932 թ կապվել է հակահեղափոխական դաշնակցական անձանց հետ և ամեն միջոցներով օգնել նրանց:

ՀՀ դատախազության 1991 թվականի ապրիլի 25-ի եզրակացությամբ Խաչիկ Խաչիկյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1989-ի հունվարի 16-ի՝ 30-40-ական թթ. և 50 թթ. սկզբներին ռեպրեսիայի զոհերի նկատմամբ արդարությունը վերականգնելու լրացուցիչ միջոցառումների մասին հրամանգրի 1-ին հոդվածի հիման վրա ռեաբիլիտացիայի է ենթարկվել:

Խաչիկ Խաչիկյանը ծնվել էր 1905 թվականին, բայց ոչ թե Այնալու/ Դավթաշեն/ գյուղում, ինչը ժամանակին տարածված սխալ էր, այլ Արևմտյան Հայաստանի Սասուն գավառում, Պերմ գյուղում:

Ովքե՞ր էին Խորհրդային Հայաստանի թուրքահայերը:

Բարձրադիր Սասունում 1915 թվականի գարնանը սկզբում ապաստան գտան կոտորածից փախչող շրջակա բնակավայրի հայերը: Սասունի 80. 233 հայ բնակիչների ոչնչացման համար, ովքեր միշտ էին ապացուցել, որ առանց մարտի չեն հանձնվելու, 30.000 հայ ու քուրդ էին պաշարել անառիկ Սասունը, և նրանց դեմ կանգնած էր 1000 սասունցի հայ՝ հրացաններով (Ռայմոնդ Գևորգյան «Ամբողջական Ցեղասպանություն»):

Մարտնչելով, նրանց մի մասը փրկվեց ու ապաստանեց հիմնականում Թալինի շրջանում, տեղանքի ու բնության նմանության համար: Նա՝ Խաչիկ Դանիելի Խաչիկյանը, տասը տարեկան էր գաղթելիս:

Ի՞նչ ուներ աղետից փրկված տղեկը 17 տարի անց, 1932 թվականին, ապրում էր գաղթած համագյուղացիներով բնակեցված գյուղում, ազգականների հետ հարևանությամբ, ինչպես հին էրգրում, ամուսնացած էր գեղեցիկ հայուհի Մանեի հետ, երկու դուստր ու որդի ուներ, սիրող մայր ու քույր… Երազանքներ ուներ 27 տարեկան երիտասարդը ոտքի կանգնելու, հայրենակորույս մորը ապավեն լինելու, զավակներին կրթության տալու:

Բայց և այնպես, ինչպես կասեն վանեցիները, եթե սասունցի ես, երիտասարդ ու գրագետ, սովետ միության առաջ ի բնուստ մեղքեր ունես: Հատկապես ծանր է եղել Թալինի ու Շիրակի թուրքահայերի վիճակը: Արևմտահայերի տներում նույնիսկ երգելն ու պարելն էր արգելված: 1926 թ հետո փախստականներին խստիվ արգելված էր խոսել Ցեղասպանության և էրգիր- հայրենիքի մասին:

Ովքե՞ր էին, ի վերջո, նրանք, խորհրդային գյուղացինե՞ր, ամենօրյա ծանր աշխատանքով հանապազօրյա հացը վաստակող, «Սասուն վերադառնալ ցանկացող հերոսնե՞ր»/ Քոչարի մեղադրականով/, թե երազկոտ կարոտյալներ, որոնց համար «կարոտը տխրություն էր, անուշ- անուշ տխրություն»/Գալշոյան/:

Գալշոյան Մուշեղի Կաթնաղբյուրի հարևան Դավթաշենից 27 տարեկան Խաչիկ Խաչիկյանը ձերբակալվեց 1932 թվականին, ծանր մեղադրանքով՝ «կապվել է հակահեղափոխական դաշնակցական անձանց հետ և ամեն միջոցներով օգնել նրանց», 1938 թվականին տասը տարով աքսորվել ու այլևս չի վերադարձել:

Հայաստանում 1932 թ դաշնակցական գործունեության համար ձերբակալվել է 852 մարդ, Խաչիկ Խաչիկյանը նրանցից մեկն էր: Ընդհարապես դաշնակցական գործունեության մեղադրանք է առաջադրվել 1333 անգամ: 1939 թ Գուլագում 11 հազար 64 հայ կար, Խաչիկ

Դանիելի Խաչիկյանը նրանցից մեկն էր: Հրանտ Մաթևոսյանի ձևակերպմամբ, մարդիկ, ովքեր պատմության դասագրքեր են մտնում իբրև վիճակագրության:

Փոքրածավալ բլոկնոտի էջերի վրա գեղեցիկ ձեռագրով շարադրված՝ աքսորից տուն ուղարկված նամակների միջոցով վիճակագրությունից կյանքայնացնում ենք մեկ հայ մարդու: Նամակները գեղագիր են, գրագետ, մինչև 1936թ ուղղագրությամբ, ուղղված քրոջը, կնոջը, որդիներին՝ **անխիղջ քույրիկ, անգութ Մանե, իմ ծաղիկ Գառնիկ**

Նամակ քրոջը, վշտացած՝ քույրիկ, չնեղանաս իմ այս գրվածքից



«Քույրիկ Աղաթ,

Ընդունիր յեղբայրական բարևներս, յեթե կամիս ինձի հարցնել, վոչինչ, կապրիմ, դեռ չեմ մահացել, այնպես որ դուք բոլորն էլ կը կարծեք, որ յիս այստեղ պիտի մեռնիմ, իսկ դուք կենդանի մնաք: Քույրիկ, կարծեմ որ 1938 թվի ոգոստոս իլի սեպտեմբեր ամիսնիր, լերբ յես ձեզանից մի նամակ ստացա, որտեղ գրված էր որ ջուրն արյուն չի դառնա: Բայց 40 թվին կարծեր վոր արյունը ջուր վոչ թե կարծեմ որ ավելի է անպետքացել և արյուն հետրզ հետե կը վոչընչանա, յերբ որ քույրիկ չնեղանաս իմ այս գրվածքից իմ աչքերիս առաջ տեսնում իմ այս թըշվառ վիճակ ու ձեր վերաբերմունքը, վոր այս որ լրացավ 8 ամիս, յերբ յես ձեզանից վոչ մի տեղեկություն չունիմ, չնայած որ այս իմ նեղ … 3 հեռագիր ղրկեցի և այսպես վոչ մեկի պատասխան չստացա և այստեղ գալիս եմ հարյուր տոկոսով որ իմ տնտեսությունը բոլորը մահացել են և դուք ինձ չարչարումիք, չեք ուզում ինձ գրել, ավելի վատիք անում, վորովհետև յերբ իմանամ վոր չկան, խիղջս հանգիստ կը լինի և այդքան չեմ տանջվում ու մաշվում:

Քույրիկ ջան, այս իմ վերջին նամակը կը լինի լավ հավատացած, վոր յեթե այս նամակի պատասխան ինչվոր ճիշտնե չը գըրիս, լավ հավատացած եղի սդիպյալ կը լինեմ ինքնասպանություն վերջ կտամ իմ այս յերջանիկ կյանքին: Քեզ վերջին խոսք քանի վոր տանջվումիմ գիշեր-ցերեկ, քանի որ գիտեմ վոչ ազգ ունիմ, վոչ բարեկամ, գիտեմ վոր վոչ վոքել իմ մասին չի հոգում և չի ափսոսում: Յիս մտածումեյի ոտարության մեջ չընայած վոր հանգուցյալ մայրիկըս մահացել է, բայց դարձյալ իմ ազգականներս և բարեկամներս ինձ կը մխիթարեն ինչ դուրս յեկավ, հակառակ, ավելի ցավերս ու ավելի մտածմունքըս խորացավ, թե որինակ,արդյեք ինչե պատահել, վոր նամակ չկա, քույրիկ ջան, մահ միր բոլորի համար է, մի կարծիք որ դուք չը պիտի մեռնիք, յես խնդրում եմ ինչ կա թաքցնել, ավելի վատ եք անում: Յես խնդրում եմ անպայման ինչ վոր ճշտություն է ինձ գրիր Մանեյի մասին. Մահացել է,

բանտարկվել, գնացել է թե տուն է, ինչ որ ճշմարտություն և յեթե կընդունի նորից գրիք վոր ինչ է պաջառ վոր նամակ չի գրում:

Գրեցեք ձեր առողջության, ձեր աշխատանքների մասին, գյուղացիների մասին մեկիկ-մեկիկ, այս տարվա բերքի մասին, հարևաններին հանփյուրիր իմ կողմից

Յեթե կը կարողանաք, իմ յերեխաներին ասա, վոր ձեր հայրիկ բարեվ ունի ձեզ:

Քեզ սպասող քո յեղբայր թշվառ Խաչիկ, Խաչիկ

09.09.40 թվին

Նամակ որդիներին. կյանքս կախված է ձեզանից ու դուք ինձնից հրաժարվում եք



«Սիրելի և անմոռանալի վորդիներ

Գալիս եմ հարցնելու ձեր կյանքի վողջությունը: Եթե դուք էլ կամիք ինձի հարցնել, վոչինչ, կապրիմ, միայն իմ ցանկություն է, որ ձեր առողջություն իմանամ: Այսօր լրացավ 8 ամիս ձեզնից տեղեկություն չունիմ և մտածմունքի մեջ տառապում իմ:

Սիրեի վորդիներ, միթե դուք չեք կարող ինքներդ նամակով տեղեկություն գրել:

Սիրելի վորդիներ, հույսս կտրում եմ այն իմաստով, վոր դուք բոլորովին ինձ մոռացել եք: Չնայած որ մինչև վերջերս ամեն կողմից եթե բարեկամներ ու ազգականներ չեն մխիթարում նամակով, բայց իմ յերեխաներս արդեն դպրոց են գնում և կարող են ինձ մխիթարել այս դժբաղդ ոտարության մեջ, բայց դուրս եկավ ինչ, յես այս տեղից չեմ կարող պարտավորեցնել:

Հռեփսիկ, կարծեմ որ արդեն դուն 3-4-րդ խումբն ես և դուն կարող ես մանրամասն գրել ձեր տնտեսության մասին, թե ինչե պատահել, որ նամակ չեք գրում: Գրիր, վորդի ջան, ինչ որ պատահել է պարզ գրիր. Յեթե քո մայրիկն է մահացել, նորից գրիր: Կյանքս կախված է ձեզանից ու դուք ինձնից հրաժարվում եք: Իսկ եթե կենդանի է, ինչու է հրաժարվել ինձ նամակ գրիլուց, հայրիկս պահանջում է ճիշտ գրել: Սիրելի բալիկներ, 3 հեռագիր տվեցի ու վոչ մեկի պատասխան չստացա այդ բոլորի հետևանքով որ բոլորդ էլ մահացել եք:

Մանե այս մի տող քեզե պատկանում, եթե կենդանի ես, տուն ես, նամակ չես գում, ամոթ քեզ, ուրիշ վոչինչ չեմ ասում: Սիրելի վորդիներ, ընդունեք հայրական քաղցր բարևներ ու գրկահաս հանփույրներ: Իմ թշվառ կյանքի վիճակը և անմիջապես ինձ կը տեղեկացնեք ձեր վողջ լինելը, մինչև չստանամ նամակ այլևս բարևներ ձեր թշվառ հայրիկից:

Սիրելի բալիկներ, խնդրում եմ յոր անպայման գնաք իմ սիրելի մայրիկի գերեզմանի վրա և ասեք նրան, որ մեր հայրիկ քեզ բարև է ուղարկել: Այս խնդրածս չմոռանաք:

Մանե, կենդանի ես, ինչ ես լռել, ինչու չես խոսում, քարես կտրել, տժվարություն չես կարող տանել, թե թշվառացյալիս օտար իս: 20.08.1939 թ…»:

Նամակներ կնոջը՝ իմ մամայի գերեզմանը չը թողնես քանդվի

«Բարևագիր

Սիրելի Մանե գրում եմ քեզ այս երկու տող

Փետրվարի 15-ին յիս ստացա քո բասիլկան, որ դուք ուղարկել եք հունվարի 27-ին: Այնպես որ այդ մասին անհոգ եղեք, չը մտածես էնպես որ կներեք պատասխան ուշացրի անկախ ինձանից իհարկե, նորից գրեմ, որ անկախ ինձանից:

Բաց անելու ժամանակ վերցրեցին ձեր նամակ ու այն երկու թուղթ, ինչ վոր նամակի հետն էր և ասացին, որ պետք է ցենզուրայի յենթարկեն, նոր հանձնեն, յես էլ սբասեցի իմանամ նոր գրեմ: Բայց դժբաղտաբար մինչ օրս Բայց, Մանե ջան, մյուս նամակս ստանալու պես կը պատասխանիս ինչ նամակ էր և ինչ թուղթեր: Ձեր բասիլկան ստացա 3 բանկա …./անհասկանալի/ շաքար և 4 հատ բաբիրոզ:

Գրիր ձեր մոտ մթերքի էժան ու թանկության մասին, հարևանների յերեխաների մասին

25.02.41 թ.

Գրիլու թուղթ մի քանի լիստ ուղարկած լինեք Մանե ջան, այս խնդիրքը քեզ չը մոռանաս իմ մամայի գերեզմանը չը թողնես քանդվի

Գրիր տեսնեմ ով վորտեղ է աշխատում և ինչ աշխատանք է անում, Պոդոսի տնտեսության և իր որպիսության մասին, Աղաթ գնացել է ֆերմա Բասիլկայի չեմ կարող գրել և յերբ պիտի իմանասմ որ ես ծխելու ոչ մի հնարավորություն չունիմ, եթե կարող ես և չես նեղանում թութուն ուղարկի, քանի որ չեմ կարողանում հրաժարվում ծխելուց:

Մանեին գրիր կազմակերպության անունը, անձրևների հեղեղը շատ վնաս տվեց:

Մանե ջան, մոտեցավ երկու տարին, սակայն ինչվոր իմ ծաղիկ Գառնիկի վոչ մի ամգամ չը կարողացա հանգիստ լինել նրա համար: Եթե կարողացար, նրան կը նկարես Մոտեցավ 3 ամիս, վոր ձեզանից վոչ մի նամակ չեմ ստացել, յիս ուղակի զարմանում եմ, թե արդյոք ինչ պատահեց Հանփյուրիր իմ Գառնիկի, Հռեփսիկի և Հասմիկի յերեսները : 20 8 1939 թ»

Ուրիշ նամակից՝

«Գրիր պարզ, եթե դժբաղտոթյուն է պատահել, գիտեմ որ մայրիկս մահացել է Գրիր տեսնեմ արդյոք նրան ինչպես թաղեցիք և որտեղ եք թաղել, ինչ հիվանդության պատճառով էր արդյոք, շատ տժվարություն կրեց: Գիտենամ, որ վշտացած սրտով գերեզման մտավ առանցի իր դժբաղտ վորդու ձայնը լսիլու և իր …վշտացած սրտով սև հողի տակ տանջվիլ Միթե ես արժանի եմ…»:

Ինձ քաղցր կաթ տվող, իմ ձեռքով զոհ գնացող մայրիկ



«Մայրիկ ջան,չէ որ երբ ձեզնից նամակ եմ ստանում, իմ սիրտը հանգիստ կը լինի

Մայրիկ ջան, խնդրում եմ որ դու քո քաղցր բերանից կը խոսիս և Հռիփսիկը

Յիս լսեցի մի անուշ ձայն, իմ ծերացած մոր մոտ երփայլեց նշույլ նվիրական բայց ափսոս վոր յերազ էր

Հանփյուրեմ քո ձեռքը մայրիկ ջան, ջան մնամ նամակիդ սբասող քո վորդի Խաչիկ Խաչիկյան Փետրվարի 2-ին, 1940 թ.:

Սիրելի մայրիկ ջան, Ընդունիր քո անկեղծ որդի Խաչիկից քաղցր որդիական անուշ բարևներ Լրացավ մոտ յերկու տարի վոր քեզանից հեռացել եմ, քանի որ այս երկու տարի չեմ լսել մայրական անուշ ձայն ու մայրական քաղցր փաղաքշանք, բայց մայրիկ ջան, էլի գրում եմ, այլ քեզ յերկար կյանք ու առողջություն: Չեմ կարողանում քո մեղկերի տակից դուրս գալ մայրիկ ջանԼ Հանկիստ կինաս և իզուր տեղ քեզ լալով չը տանջիս, որքան որ հանկիստ լինես, սիրտս հանգիստ կը լինի

Եվ իմ ցանկությունը, որ ժամանակին կարողանամ քո կենդանի վոսկորներ իմ աչքերի առաջ տեսնեմ և այն ժամանակ թող իմ սրտումս … հավերժական կամքը մահվանև այն ժամանակ սիրտս հանգիստ կը լինի, սիրտս չի վրդովի և չեմ տանջվի: Մայրիկ ջան, քաղցր մայրիկ ջան

Ինձ քաղցր կաթ տվող, իմ ձեռքով զոհ գնացող մայրիկ

Մայր, մայր, մայր, վորքան կանչեմ դարձյալ մայր

Մայրիկ ջան, հանփուրեմ քո ձեռքերը Մանե ջան, իմ կողմից պահանջում, խնդրում եմ ամեն մի ժամանակ հոգալ հանփուրեմ քո ձեռքը 20 8 1939 թ»:

Գայանե Մկրտչյան

Հ.Գ.- Տարիներով եղել եմ իմ ազգականի տանը, զով Դավթաշենում, բայց ոչ մի խոսք չի հնչել, թե ուր է ընտանիքի հայրը: Այդ ժամանակ դադե Մանեն /դադեն թվում էր պատվանուն՝ տիրուհի, իշխանուհի, ում ձեռքին են ընկույզի /ընդուզ/ մառանի բանալիները/, անտարիք ու անհասկանալի պինդ կաղմվածքով, մի քանի ծալ սև զգեստների մեջ ամառ-ձմեռ պատսպարված, գեղեցիկ դասական դիմագծերով, խստահայաց, ծանրախոհ կին էր:

Աղջիկները հարևանությամբ էին ամուսնացած, բազմազավակ ընտանքիատեր, Գառնիկ և ամուսնացած էր և միասին էին ապրում՝ ըստ ավանդականի: Չէին խոսում, որ մեծ գաղտնիք ու հարգանքի արժանի վիշտ կա, հիմա կարող եմ վերծանել որդու՝ անձնվեր, անսակարկելի սերը մոր նկատմամբ, և մոր՝ բոլորանվեր կառչածությունը որդուն, որը հնչում էր՝ Կառնիգ, լառ…

Արդեն կենդանի չեն դադե Մանեն, Գառնիկը, Գառնիկի կինը՝ հարազատ մորաքույրս, ու իմ ձեռքին են մաշված նամակներ և հին նկար և գրում եմ մի մարդու մասին, որի ոգին, հիմա եմ վերծանում, եղել է ինձ մշտապես հյուրընկալած այդ շռայլ տանը: Հիմա եմ հասկանում, որ մեկ անգամ դադե Մանեի գաղտնիքի, մեծ վշտի ակամա վկան եմ եղել: Ամռան այդ կեսօրին բոլոր երեխաները քնած էին, և տան կանայք ինձ չէին նկատել հսկա ընկուզենու ստվերում: Կառույցը փլվելու, ամբարտակը խորտակվելու նման էր սկիզբը՝ «Չինո, լառ, տնի իմ նման տանջվուկ իս», աղետավոր էր զուսպ կանանց միասնական, ողբերգական հեծեծանքը:

Կենդանի չեն դադե Մանեն, Գառնիկը, Գառնիկի կինը, բայց վստահաաբար անտեր չի գաղթական մեծ մայրիկի գերեզմանը, քանի որ ընտանեկան գերեզմանոցում անխնամ շիրմաքարեր չեն լինում:

Հավերժ 35 տարեկան պապի անվանակից, ինժեներական կրթությամբ Խաչիկ Խաչիկյանի որդին, ճարտարագիտականի ուսանող Գառնիկ Խաչիկյանը, օրերս վերադարձավ հայկական բանակից: Եկավ շարունակելու ուսումը, իրագործելու թուրքի ու սովետի անմեղ զոհ Խաչիկ մեծ պապի պատգամը, հղված հեռավոր աքսորից՝ ոչինչ չխնայեք որդուս ուսման համար, քանի որ ուսումն է հետագա փրկարար: